ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի շնորհավորական ուղերձը ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի 20-ամյա հոբելյանի առթիվ

Հարգելի Սամսոն Դավոյան, դասախոսներ, աշխատակիցներ, ուսանողներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորատի, պրոֆեսորադասախոսական կազմի, աշխատակիցների և ուսանողների անունից ջերմորեն շնորհավորում եմ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի 20-ամյակը, որը նաև մայր բուհի տոնն է:
1997 թվականի մայիսի 30-ին, ՀՀ Կառավարության որոշմամբ, Գյումրիում բացվեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մասնաճյուղը՝ իր շուրջը միավորելով գաղափարակից ու նվիրյալ մտավորականների: Այս ժամանակահատվածը մասնաճյուղի համար դյուրին չի ընթացել. մեր մշակութային մայրաքաղաքը դեռ նոր էր ապաքինվում երկաշարժի հասցրած վերքերից, և բուհն իր առջև նաև խնդիր էր դնում իր ներուժով մասնակիցը դառնալու վերակառուցման ու նոր զարգացման: Այն քայլ առ քայլ առաջ էր ընթանում՝ հաջողությամբ հաղթահարելով բազում դժվարություններ ու փորձության շրջափուլեր:
Քսան տարի անց, հայացք ձգելով այդ իրադարձության ու արդեն իսկ ծանրակշիռ ճանապարհ անցած կրթօջախի պատմությանը, կարելի է փաստել՝ այն պատվով է իրականացնում իր առաքելությունը, հավատարիմ է մասնագիտական բարձրորակ կրթական ծառայություն մատուցելու ու արժանապատիվ մարդ-քաղաքացի դաստիարակելու իր կոչմանը:
Ինձ համար՝ որպես բուհի ռեկտորի և գիտնական-մանկավարժի, տեսանելի են այն բոլոր հիմնախնդիրները, որոնք ծառացած են բարձրագույն կրթական հաստատությունների առջև, հետևաբար գնահատելի է այն ավանդը, որ մեր համալսարանի մասնաճյուղի կայացման համար ի սկզբանե ներ է դրվել: Անշուշտ, դա մի համալիր գործընթաց է, որն սկսվում է նյութատեխնիկական բազայի ձևավորումից, աշխատանքային և ուսման պայմանների ստեղծումից, ժամանակակից տեղեկատվական համակարգերի ներդրումից մինչև բարձրակարգ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հավաքագրում, արդիական մասնագիտական ծրագրերի կազմում ու դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառում:
Թե որքանով է հաջողվել այս ամենը մեզ և մեր Գյումրու գործընկերներին, վկայում են հետևյալ փաստերը. մեկ ֆակուլտետով, երկու մասնագիտությամբ (ֆինանսներ և վարկ, հաշվապահական հաշվառում և աուդիտ) ստեղծված բուհն այսօր արդեն կրթության երկաստիճան համակարգում ընդլայնել է մասնագիտությունների ցանկը՝ ֆինանսներ, հաշվապահություն, կառավարում, միջազգային տնտեսական հարաբերություններ: Մասնաճյուղի գիտնական-մանկավարժներն ու ուսանողները ակտիվորեն են մասնակցում հանրապետության գիտական կյանքին (գիտական նստաշրջաններ, ուսանողական գիտաժողովներ, հետազոտական ծրագրեր), ստեղծված է հարմարավետ կրթական միջավայր՝ բարենորոգ լսարաններ, նորագույն պահանջներին համապատասխան համակարգչային

սրահներ ու հարուստ գրադարան: Հատկանշական է և գովելի, որ մայր բուհում տեղի ունեցող բարեփոխումներն ուղղակիորեն արձագանք են ստանում մասնաճյուղում:

Փաստելով, որ 20 տարվա ընթացքում ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղն արձանագրել է ձեռքբերումներ ու հաջողություններ, բարի համբավ ու հեղինակություն, այնուհանդերձ, պետք է շեշտել, որ կրթական համակարգի արդի մարտահրավերների, որակի ապահովման չափորոշիչների ու մրցակցության պայմաններում անելիքներ շատ կան: Բարեփոխումների ոգով առաջընթաց կառուցելը, յուրաքանչյուրի կողմից իր ստանձնած պարտականությունների լիարժեք գիտակցումն ու արհեստավարժ կատարումը պետք է լինեն մեր բոլորիս անխախտ ուղենիշը:

Հարգելի գործընկերներ, շնորհավորում եմ ձեր տոնը և երիտասարդական այս ծաղկուն հասակում մասնաճյուղին մաղթում եմ նորանոր նվաճումներ ու կենսագրության նոր ու հարուստ տասնամյակներ:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր